Աբրահամ ասոր ընկկ երկիր գրէ, «Մու֊
« քով կու լինի. որպէս Շահին նման է.
« Սամուրն այն (այլ) կու որսայ. զարխնն
« կու ծըծէ, միսն չի ուտեր. երթան գտանեն
« զՍամուրն, և զմորթն մուշտակ կու շի֊
« նեն թագաւորական։ Սունկուրի կենդանին
« հազար ոսկիակ կու ծախեն, և յորժամ
« մեռանի՝ այլևի հազար ոսկիակ կու առ֊
« նուն, զի շահարար է ամենայն օգուածքն
« նորա, միսն և եղն, ոսկրն և թեպուրն,
« զի բնութեամբ տաք է, որ չկայ այլ իւր
« նման։ Այս թռչունս աճագնատեսիլ է քան
« զամենայն պատառող թռչունսն և յուժեղ։
« Հետ չորքոտանեաց երթայ միաւորէ, և
« յորժամ ձու ածէ, նստի, հետեւանց հայի.
« յորժամ ձուէն ձագն ելանէ, տեսանէ,
« թէ իւր նման է ձագն՝ սնուցանէ. և թէ
« իւր նման չէ՝ վիշապի նման կամ այլ
« չորքոտանեացն նման լինի, ստնու և փախ֊
« չի. և մնայ ձագն Աստուած–ապով»?։ —

Շան ստորագրութեան մէջ այլ այս առաս֊
պելս գրէ Աբրահամ, և կ'աւելցընէ. «Ասեն,
« թէ սինճապ թագին (մոխրագոյն բարակ
« շունն) այն Սունկուր հաւուն ածած հաւ֊
« կիթէն է եղած. քանզի թագին այն փոքր
« թիսու նման նշան ունի, ոմանք ասեն, թէ
« վիշապք այլ Սունկուր հաւուն ձուէն կու
« ծնանին, քանզի հաւն այն շատ ցեղ
« չորքոտանեաց հետն միաւորի»։

Երրորդ թռչունն «Պաղապան, քան զՊա֊
« զան (Բազայ) մեծ է և զօրաւոր և ալա֊
« ճայ է. փոքր եղնիկն որ Եաղմորձայ ասեն
« թուրք բառով, զայն առնու սատակէ կտու֊
« ցովն և ճանկովն և ուտէ. եւս առաւել
« զկապըստակն, ինկի չի կարեր խալըսիլ ի
« նորա ձեռացն։ Ի կուրճիստանն աղէկն
« կու գտանի»։

Այծուեաց մեծագոյն տեսակն՝ որ յԵւրո֊
պա՝ յԱլպեանս Գառանց գիշատիչն կոչուի,
մեր կենդանաբանէն թուրք լեզուաւ երկու
անուն ունի, «Ղարայղուշն զոր Տավշանճըղ
« (նապաստակ որսացող) ասեն. մեծ աճա֊
« գին է քան զամենայն պատառող թռչունսն
« և զօրաւոր, մինչեւ ի ձայնէն նորա սարսին
« գազանքն անապատին. ի բարձանց ի վայր
« իջանէ գոռալով, որպէս թէ երկինքն որո֊
« տայ, և քաջապէս առնու զեղն, զեղն և
« զոչխարսն և զայլսն ամենայն, եւս առա֊
« ւել զմարդն և զձին. ապա չէն տեղ չի
« լինիր, անբնակ մեծամեծ լեռունքն կու
« լինի. ապա հարիւր տարին մի անգամ
« կու փոխէ զփետուրն. զի ասէ մարգարէն
« Դաւիթ, "Նորոգեսցի որպէս արծուի ման֊
« կութիւն քո„. և հազար տարի կու ապրի։
« Տեսաք աչօք մերովք, մարդ մի ունէր այս
« Ղարաղուշս, և ինքն հեծեալ էր ի ձի, և
« թռչունս յետեւ ձիոյն կանգնեալ էր, և
« արջ մի մօտ իւր. յորժամ հեծնուր մարդս
« ի ձի և արջ զուզէնկին (ասպանդակ) կու
« բռնէր, և երկու շուն այլ կայր հետ իւրն,
« և պահէին զնոսա. և բոլոր տարի մի
« շրջագայէր ի քաղաքն Ըստամպօլ. և մար֊
« դիկն հետ իւր շրջագայէին. որպէս զար֊
« մանք երեւէր մարդկաց և ապա մէկ տա֊
« րուն ի վեր՝ այլ չերեւեցաւ»։

Բանաստեղծից և ամենայն զգայուն ա֊
կընջաց սիրելի և զմայլելի երգահաւն Սո֊
խակ, խնամով ստորագրուած է յԱբրահամէ.
« Հայերէն Պըլպուլ, թուրք՝ Պուլպուլ. յոր֊
« ժամ որ գայ տեղ մի որ ուզէ բնակիլ և անդ
« բուն դնել և ձագս հանել, առու գնացման
« ջրային տեղրանքն կու սիրէ, ծաղկանաց՝
« եւս առաւել վարդի՝ աշըք (սիրահար) է.
« անուշ ձայն և երգարանն կու սիրէ. յոր֊
« ժամ տեղ մի անուշ եղանակեն կամ թելէ
« երգ նուագեն, ունկն դնէ, և առաւել սիրուն
« թըմբի, որպէս զխելագար անկանի՝ մինչեւ
« ժամ մի կամ աւելի, ապա խելքն ի վե֊
« րան գայ։ Յորժամ վարդ տեսանէ բացեալ
« կամ ի կոկոն, երթեալ նստի ի զիմացն,
« հայի, և ձայն ցեղուցեղ երգէ, մինչեւ որ
« զգիշերն այլ ձայն ածէ մինչեւ ի լոյսն.
« յետոյ տեսանէ որ լուսացաւ, քիչ մի
« հանկչի և երթեալ կերակրի և ջուր խմէ և
« լուացվի. ապա կամաց խելքն ի գլուխն
« գայ մինչեւ իրիկուն. ապա տեսանէ որ
« երեկոյացաւ, այլ սկսանի խօսիլ մինչեւ
« ի լոյս. զի սիրու տէր է ծաղկանց և վար֊
« դի. լինի որ զինքն ի վարդին տերեւն
« հարկանէ, ընկնի և այնպէս մնայ. և թէ
« այն պահն ջուրն ձգէ զինքն և լուացվի,
« կու մեռանի. զի առաւել սիրուն նուագեալ